№8

# Մենք հավասար ենք

Տեղեկատվական թերթիկ

Հոկտեմբեր 2008

Unison

Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» հասարակական կազմակերպություն

## Գործելու ժամանակն է

Սեպտեմբերի 25-ին Իջևանում տեղի ունեցավ «Հաշմանդամությունը Հայաստանում. իրավիճակի բարելավման հեռանկարներ» թեմայով կլոր սեղան-քննարկում: Մասնակցում էին մարզպետարանի, քաղաքապետարանի և տեղական ՀԿ-ների ներկայացուցիչներ, ինչպես նաև հաշմանդամ երեխաների ծնողներ:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին ներառական կրթության արդյունավետության, հաշմանդամների զբաղվածության ապահովման, հանրային նշանակության կառույցների մատչելիության հիմնահարցերը: Իջևանում գործում է ընդամենը մեկ դպրոց, որն իրականացնում է ներառական կրթություն, սակայն այն դեռևս ամբողջովին չի բավարարում հաշմանդամ երեխաների կարիքները: Մասնավորապես, բացակայում են հարմարեցված սանհանգույց և երկրորդ հարկ բարձրանալու համար վերելակ: Այդ պատճառով տեղաշարժման խնդիրներ ունեցող երեխաները չեն կարողանում ինքնուրույն բարձրանալ երկրորդ հարկ:

Տավուշի մարզում գործազրկության մակարդակը շատ բարձր է, և աշխատանքով ապահովված չեն և հաշմանդամները և ոչ-հաշմանդամները:

Անշուշտ, խնդիրները բազմաթիվ են, սակայն գործնական քայլերը կարող են իրապես բարելավել հաշմանդամների կյանքի որակը և արժանապատիվ ու բարեկեցիկ կյանք ապահովել նրանց համար:

## Աստծո կամոք փաստաբան

**Կիևի 27-ամյա բնակչուհի Նատալյա Կրուկը ի ծնե հաշմանդամ է, տեղաշարժվում է սայլակի օգնությամբ: Նա ակտիվորեն զբաղվում է կարիերայով, գրում է բանաստեղծություններ, սիրում է էքստրիմ: Նատալյան չի սիրում երեք բան՝ իր նկատմամբ խղճահարություն, անպարտաճանաչություն և կյանքի դանդաղաշարժ ընթացք: Ի դեպ, նրա կյանքը ծանծրալի չես անվանի: Այսպես, իր քսանհինգամյակին Նատաշան պարաշյուտային թռիչք կատարեց 4200 մետր բարձրությունից:**

- 8-9 տարեկան հասակում ես չէի ցանկանում նույնիսկ տանից դուրս գալ. հասակակիցներս մշտապես ծաղրում էին,- պատմում է Նատալյան: - Երբ քույրս ինձ տուն էր բերում, և ես բողոքում էի, ծնողներս պատասխանում էին. «Մի մտահոգվիր, քեզ մոտ ոտքերն են հիվանդ, իսկ իրենց մոտ գլուխը»: Առհասարակ ընտանիքս միշտ ինձ սատարում էր, միևնույն ժամանակ խղճահարության և ավելորդ խնամակալության դրսևորում երբեք չեմ զգացել:

Երբ երեխան ի վիճակի չէ ինքնուրույն քայլել, ուտել և հագնվել՝ նա կարող է մեծանալ կամազուրկ և կամակոր անձնավորություն: Կարծում եմ, շնորհիվ ծնողներիս ես այդպիսին չեմ:

Ծանոթիս համոզմամբ, հաշմանդամի սայլակը իրեն ազատում է գործուն կյանք վարելու պարտականությունից: Նա ծաղիկ է աճեցնում, զբաղվում է փիլիսոփայությամբ և հոգևոր ինքնակատարելագործմամբ: Ճիշտ է, մինչդեռ նա «կատարելագործվում է», նրա տարեց ծնողները երեք տեղ են աշխատում:

Իսկ ես կարմիր դիպլոմով ավարտեցի Կիևի համալսարանի իրավաբանության ֆակուլտետի հեռակա ուսուցման բաժինը, այժմ սովորում եմ ասպիրանտուրայում: Այս տարի հաջողությամբ հանձնեցի համապատասխան քննություն և դարձա փաստաբան:

Ուկրաինայում կա խուլուհամր փաստաբան, կան կույր փաստաբաններ, սակայն ՄՈՒԿ-ի (մանկական ուղեղային կաթված - խմբ.) նման տեսակի ախտորոշմամբ միայն ես եմ: Ոչ բոլորին է, իհարկե, դուր գալիս աշխատանքը հաշմանդամի հետ: Մի անգամ ես զգացի դատավորի բացասական վերաբերմունքն իմ հանդեպ, երբ նա, ցանկանալով ինձ նվաստացնել, արձանագրության «աշխատանքի վայր» սյունյակում նշեց «առաջին խմբի հաշմանդամ»:

Շատերը չէին պատկերացնում, թե ինչպես ես կկարողանամ աշխատել ընտրած մասնագիտությամբ: Մտածում էին՝ ձեռքերս թույլ են, անգամ գրել չեմ կարողանա: Բայց ես սովորեցի աշխատել համակարգչով: Հարցնում էին՝ ինչպե՞ս եմ մտնելու դատարան, ոստիկանություն, դատախազություն. չէ՞ որ դրանց շենքերը մատչելի չեն սայլակավոր հաշմանդամների համար: Ես երթևեկում եմ տաքսիով և ունեմ ուղեկցող: Սայլակով ես չեմ կարող մուտք գործել դատավորի և դատախազի սենյակները, իսկ դատալսումները հաճախ նշանակվում են դատարանների բարձր հարկերում, որտեղ բացակայում են վերելակները: Նման իրավիճակում պաշտպանյալների մեծ մասը, չհրաժարվելով իմ ծառայություններից, գրկած տանում են ինձ դատական նիստի: Իրենց բախտի բերմամբ, կշռում եմ ընդամենը 55 կգ:

Ես երջանիկ մարդ եմ. ունեմ հետաքրքիր աշխատանք, շրջապատված եմ ընկերներով և հարազատներով: Երազում եմ մեծ և հաստատուն ընտանիք կազմել, սակայն դեռ չեմ հանդիպել իմ երկրորդ կեսին: Համոզված եմ, որ կյանքիս գլխավոր հանդիպումը դեռ առջևում է:

Հրապարակումն իրականացվում է Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության Հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի և Նիդեռլանդների Կառավարության ֆինանսական միջոցներով

# Իրավաբանի անկյուն
## Հարց և պատասխան

**Ես 2-րդ խմբի հաշմանդամ եմ: Ունեմ տասնամյա կրթություն: Շատ կցանկանայի աշխատել, սակայն մասնագիտություն չունեմ: Առաջարկվող մասնագիտական ուսուցման դասընթացները բավականին թանկ արժեն, իսկ առանց համապատասխան կրթության և պատրաստվածության չեմ կարող աշխատանք գտնել: Ինչ խորհուրդ կտաք:**

**Ս.Բայիլյան, 24 տ., ք. Կապան**

ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 30-ի թիվ 533-Ն որոշումը սահմանում է աշխատանք փնտրող չզբաղված անմրցունակ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման կարգը: Համաձայն դրան, մասնագիտական ուսուցումը կազմակերպվում է, երբ՝

ա) աշխատաշուկայում բացակայում է ունկնդրի մասնագիտական կրթությանը համապատասխան աշխատանքը. այս դեպքում կազմակերպվում է վերամասնագիտացման դասընթաց,

բ) ունկնդրի մասնագիտական որակավորումը չի համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին. այս դեպքում կազմակերպվում է մասնագիտական որակավորման բարձրացման դասընթաց,

գ) ունկնդիրը չունի մասնագիտական կրթություն և որակավորում. այս դեպքում կազմակերպվում է նախնական մասնագիտական պատրաստման և արհեստագործական ուսուցման դասընթաց:

Մասնագիտական ուսուցման դասընթացները չեն կարող գերազանցել 3 ամիսը, նախնական մասնագիտական պատրաստման և արհեստագործական ուսուցման դեպքում 6 ամիսը: Հաշմանդամ ունկնդրին՝ աշխատանք փնտրող չզբաղված անձին, ուսուցման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում վճարվում է կրթաթոշակ: Օրենսդրորեն նախատեսված է նաև տրանսպորտային ծախսերի փոխհատուցում ունկնդրին՝ իր բնակության վայրի համայնքից դուրս այլ համայնք մասնագիտական ուսուցման ուղեգրելու դեպքում (բացառությամբ Երևան քաղաքի թաղային համայնքների): Ունկնդիրը կարող է մեկ տարվա ընթացքում մասնակցել մասնագիտական ուսուցման մեկ դասընթացի: Նույն անձը կարող է ընդգրկվել մասնագիտական ուսուցման մեկից ավելի դասընթացներում, եթե տվյալ դասընթացում առաջին անգամ ընդգրկվելու ցանկություն հայտնող չի եղել:

Եթե ունկնդիրների թիվը գերազանցում է զբաղվածության տարածքային կենտրոնի համար տվյալ տարվա զբաղվածության ամենամյա պետական ծրագրերով նախատեսված անձանց թիվը, ապա դասընթացում ընդգրկվելու նախապատվությունը տրվում է «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված աշխատաշուկայում անմրցունակ խմբերին, որոնց թվում են նաև հաշմանդամները:

Դիմելով Ձեր բնակության վայրի զբաղվածության տարածքային կենտրոն՝ կարող եք տեղեկատվություն ստանալ տարվա ընթացքում նախատեսվող մասնագիտական ուսուցման դասընթացների վերաբերյալ: Առաջիկայում սպասվող մասնագիտական ուսուցման դասընթացների մասին մանրամասն տեղեկատվություն կարող եք նաև ստանալ՝ պարբերաբար այցելելով «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պաշտոնական կայքը www.employment.am ինտերնետային հասցեով:

**Իզաբելլա Կարապետյան**
**«Ունիսոն» ՀԿ իրավաբան**

## Լեոնարդո դա Վինչի՝ Վերածննդի հանճար

Վինչի քաղաքի մոտակայքում գտնվող Անկիանո գյուղում 1452թ. ապրիլի 15-ին ծնվեց Լեոնարդո դի սեր Պիերո դ'Անտոնիոն՝ մի երեխա, ում վիճակված էր ապագայում դառնալ Վերածննդի ամենավառ խորհրդանիշներից մեկը: Լեոնարդոն նոտար Պիերո դա Վինչիի ապօրինի որդին էր: Այնուամենայնիվ, ճանաչելով հայրությունը՝ Պիերոն փայլուն կրթություն ստանալու հնարավորություն ստեղծեց իր զավակի համար:

Լեոնարդոն գրում ու նկարում էր ձախ ձեռքով, քանի որ մանկական ուղեղային կաթվածի հետևանքով լիարժեք չէր կարողանում օգտվել աջից:

Հանճարի բացառիկ տաղանդը ի հայտ եկավ դեռ վաղ հասակում: Նա նույն հաջողությամբ զբաղվում էր հանրահաշվով, երաժշտությամբ և կավագործությամբ, սակայն ամենից շատ սիրում էր նկարչություն: Երբ Լեոնարդոյի հայրը ցույց տվեց նրա նկարները Ֆլորենցիայում հայտնի գեղանկարիչ, ոսկերիչ և քանդակագործ Անդրեա Վերոկյոյին, վերջինս այնքան էր հիացել դրանցով, որ առաջարկեց Լեոնարդոյին դառնալ իր աշակերտը: Հենց Վերոկյոյի արհեստանոցում էլ սկսվեց Լեոնարդո դա Վինչիի վառ անհատականության ձևավորման գործընթացը: 20 տարեկան հասակում նա դարձավ Ֆլորենցիայի նկարիչների միության անդամ:

Հանճարեղ իտալացի գեղանկարիչ Լեոնարդո դա Վինչին իր կյանքում, գիտական և գեղարվեստական գործունեության մեջ արտահայտեց «բազմակողմանի զարգացած անձնավորության» մարդասիրական իդեալը: Իր հետաքրքրությունների շրջանակը հիրավի բազմակողմանի էր: Լեոնարդո դա Վինչին եղել է ոչ միայն հանճարեղ գեղանկարիչ, քանդակագործ, ճարտարապետ, այլ նաև գիտնական: Նա զբաղվում էր մաթեմատիկայով, մեխանիկայով, ֆիզիկայով, աստղագիտությամբ, երկրաբանությամբ, բուսաբանությամբ, մարդու և կենդանիների անատոմիայով և ֆիզիոլոգիայով: Դա Վինչիի ձեռագրերում հանդիպում են թռչող մեքենաների, ուղղաթիռի, օդապարիկի, տպագրական, փայտամշակող մեքենաների և այլ սարքերի նախագծեր, մաթեմատիկային, օպտիկային և տիեզերագիտությանը վերաբերող գաղափարներ:

Ներկայումս Թուրինի, Միլանի, Փարիզի, Վինձորի և Լոնդոնի գրադարաններում պահվում են ընդհանուր առմամբ մոտ 7000 էջ կազմող (հիմնականում գրված հայելանման աջից ձախ) նրա ձեռագրերը:


Գլխավոր խմբագիր
**Արմեն Ալավերդյան**

Հրապարակումը պատրաստեցին
**Դավիթ Բաբայան**
**Մարիաննա Չալիկյան**
**Իզաբելլա Կարապետյան**

Հասցե՝ «Ունիսոն» ՀԿ,
Երևան 0002, Դեմիրճյան 36

Հեռ./ֆաքս՝ (010) 52-21-70
Վեբ-կայք՝ www.unison.am
էլ. փոստ՝ unison@unison.am